

ՍԱՐՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Փորձը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է N թվով սարքերից ընտրել միայն երեքը: Դրա համար կատարում են հետևյալ գործողությունները. եթե տվյալ խմբում սարքերի թիվը երեքից ավելին է, ապա դրանք համարակալում են և ընտրում զույգ կամ կենտ համարներով խմբերից մեկը: Այս գործողությունները շարունակվում են այնքան ժամանակ մինչև տվյալ խմբում մնան երեք կամ ավելի պակաս թվով սարքեր: Եթե մնացած սարքերի թիվը ճիշտ հավասար է երեքի, ապա հենց դրանք էլ կընտրվեն փորձի համար:

Պահանջվում է գրել ծրագիր, որը կհաշվի նման ընտրությունների քանակը:

Մուտքային տվյալներ

Մուտքային իսկ տողում տրված է N թիվը ($1 \leq N \leq 2147483647$):

Ելքային տվյալներ

Միակ տողում պետք է արտածել նշված ընտրությունների քանակը:

Օրինակներ

N ^o	Stdin	stdout
1	3	1
2	6	2